Արձանագրություն N 3

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կարիքների համար ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայությունների գնման «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/2» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «2» « փետրվարի » 2018թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Մանյա Մխիթարյան
Հանձնաժողովի անդամներ	Հասմիկ Մնացականյան, Միհրան Համբարձումյան
Հանձնաժողովի քարտուղար	Աննա Հարությունյան

1. **ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/2 ծածկագրով մրցույթի հայտերի բացումը, օրը և ժամը**

(Մ.Մխիթարյան)

1.1 «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/2» ծածկագրով մրցույթի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2018 թվականի հունվարի 19-ին, ժամը 11:00-ին:

2. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումների (անունների) և հասցեների հրապարակում**

(Մ.Մխիթարյան)

2.1 Հայտեր ներկայացվել են հետևյալ մասնակիցների կողմից.

Մասնակիցների անվանումները	Հասցե
"Մ-Բի-Ռ" ՍՊԸ	ՀՀ, ք.Երևան, Մյասնիկյան 22/4
"Նիգ-Ապարան" ՍՊԸ	ՀՀ, ք.Երևան, ծով.Իսակովի 35/2
"Տոյոտա Երևան"	ՀՀ, ք.Երևան, Արարատյան 117/1

3. **Հայտերը էլեկտրոնային ձևով կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ տեղեկություններ**

(Մ.Մխիթարյան)

3.1 Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթները կազմված էին հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. **Բացված յուրաքանչյուր էլեկտրոնային փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ տեղեկություններ**

(Մ.Մխիթարյան)

4.1 «Նիգ Ապարան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում տուժանքի մասին համաձայնությանը կից ներկայացվող վճարման պահանջագրի մեջ տառերով և թվերով գրված հայտի ապահովման գումարները չէին համապատասխանում, ընդ որում ճիշտ գումարը գրված էր թվերով, սակայն համաձայն «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/2»

ծածկագրով մրցույթի հրավերի 8.5 կետի, *եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը*: Բացի այդ անհամապատասխանություն է արձանագրվել նաև մասնակցի կողմից էքսել ֆայլով ներկայացված ծառայությունների գների աղյուսակում չափաբաժնի ընդհանուր գնի և գնային առաջարկով ներկայացրած չափաբաժնի գնի միջև: Մասնակցի կողմից չեն ներկայացվել նաև տեխնիկական բնութագրով պահանջվող հավաստագրերը:

''Տոյոտա Երևան'' ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ծառայությունների գների աղյուսակում ոչ բոլոր տողերն են լրացված, իսկ որոշ տողերի համար գները ներկայացվել են միջակայքերով, մասնակցի կողմից ևս չեն ներկայացվել տեխնիկական բնութագրով պահանջվող հավաստագրերը:

''Մ-Բի-Ռ'' ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում էր հրավերով սահմանված պահանջներին:

«Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 41-րդ կետի համաձայն հայտերի բացման նիստը կասեցվել է և հունվարի 22-ին armeps համակարգով ծանուցում է ուղարկվել "Նիգ Ապարան" և "Տոյոտա Երևան"ՍՊԸ-երին՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում ծառայությունների գների շտկված աղյուսակները և բացակայող փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ: "Տոյոտա Երևան"ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են պակասող փաստաթղթերը, իսկ "Նիգ Ապարան" ՍՊԸ_ի կողմից սահմանված կարգով չեն ներկայացվել վերոնշյալ փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տվյալներ մասնակիցների կողմից ներկայացված գների վերաբերյալ

(Մ.Մխիթարյան)

Չափաբաժնի համարը	Գնման ենթակա ծառայությունների անվանումը	Մ-Բ-Ռ ՍՊԸ		Նիգ Ապարան ՍՊԸ		Տոյոտա-Երևան	
		Գինը առանց ԱԱՀ	Գինը ներառյալ ԱԱՀ	Գինը առանց ԱԱՀ	Գինը ներառյալ ԱԱՀ	Գինը առանց ԱԱՀ	Գինը ներառյալ ԱԱՀ
1	Շևրոլե Նիվա ավտոմեքենայի տեխնիկական սպասարկում	2,792,500	3,351,000				
2	Նիսսան Սաննի, Նիսսան Ալթիմա և Նիսսան Մենթրա ավտոմեքենաների տեխնիկական սպասարկում	16,880,000	20,256,000	20,414,400	20,414,400		
3	Տոյոտա Քեմրի ավտոմեքենայի տեխնիկական սպասարկում			7,542,000	7,542,000	37,890,000	45,468,000
4	Հյունդայի Սոնատա և Հյունդայի Տուքսոն ավտոմեքենաների տեխնիկական սպասարկում			12,494,400	12,494,400		
5	Սուզուկի SX4 ավտոմեքենայի տեխնիկական սպասարկում			6,804,800	6,804,800		

6. Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ

(Մ.Մխիթարյան)

Հ/հ	Անվանումը	Հայտ ներկայացրած մասնակիցներ		
		Մ-Բ-Ռ ՍՊԸ	Նիգ Ապարան ՍՊԸ	Տոյոտա-Երևան
1	Շևրոլե Նիվա ավտոմեքենայի տեխնիկական սպասարկում	1	-	-
2	Նիսսան Սանտի, Նիսսան Այթիմա և Նիսսան Սենթրա ավտոմեքենաների տեխնիկական սպասարկում	1	-	-
3	Տոյոտա Քեմրի ավտոմեքենայի տեխնիկական սպասարկում	-	-	1
4	Հյունդայի Սոնատա և Հյունդայի Տուքսոն ավտոմեքենաների տեխնիկական սպասարկում	-	-	-
5	Սուզուկի SX4 ավտոմեքենայի տեխնիկական սպասարկում	-	-	-

7. Տվյալներ հայտերի վերաբերյալ կատարված հարցումների և պատասխանների մասին

(Մ.Մխիթարյան)

7.1 2018թ. Հունվարի 11-ին ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/2 ծածկագրով ընթացակարգի հրավերի վերաբերյալ ստացվել է պարզաբանման հարցում: Հարցմանն ի պատասխան «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/2» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հունվարի 12-ին տրամադրել է պարզաբանում, որը սահմանված կարգով հրապարակվել է նաև www.gnumner.am կայքում:

8. Հանձնաժողովը որոշեց՝

(Մ.Մխիթարյան)

8.1 Մերժել «Նիգ-Ապարան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը:

8.2 «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/2» ծածկագրով ընթացակարգի 1,2-րդ չափաբաժնրով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<Մ-Բի-Ռ>> ՍՊԸ-ին, 3-րդ չափաբաժնով՝ «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ին:

8.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել՝ «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/2» ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների մասին պահանջվող տեղեկատվությունը ստանալու նպատակով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

9. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Մ.Մխիթարյան)

9.1 «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/2» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից եզրակացությունը ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, ժամը՝ 11:00-ին ՀՀ առողջապահության նախարարության (հասցեն՝ ք. Երևան, Կառավարական տուն 3) 2-րդ հարկում՝ նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Մանյա Մխիթարյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Միհրան Համբարձումյան

_____ Հասմիկ Մնացականյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Աննա Հարությունյան